

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ
«ԼՈՒՄՄՈՒՆՔ ԵՕԹՆԻՑ ԳՐՈՑՆ ՓԻԼՈՆԻ» ԲՆԱԳՐԻ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ

Փ. Փ. ԱՆԹԱՊՅԱՆ

Միջնադարի հայ փիլիսոփայական մտքի, զրականության, արվեստի, մանկավարժության ու մշակույթի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Սարկավագի գիտական-մատենագրական ժառանգության նկատմամբ միշտ էլ գիտական աշխույժ և բովանդակալից հետաքրքրություն է ցուցաբերվել։ Եվ դա՝ ոչ միայն հայ իրականության շրջանակներում, քանի որ Հովհաննես Սարկավագը այսօր անծանոթ անուն ու հեղինակություն չէ նաև օտար համապատասխան մասնագետների համար։ Նշելի է, մանավանդ, այն էական հանգամանքը, որ նրա ժառանգությունը մեր ողջ մատենագրության մեջ առանձնանում է իր գերազանցապես գիտական, պատմական, փիլիսոփայական-տեսական բնույթով ու արժեքով։

Այս առումով խիստ կարևորություն էր ստացել մեր կողմից այստեղ քննարկվելիք «Լուծմունք եօթնից զրոցն Փիլոնի» մեծապես ուշադրավ բնագիրը, որի հիման վրա դեռ 1950-ական թթ. ջանացել են բացահայտել, վերլուծել ու զննահատել Հովհաննես Սարկավագի մատենագրական ժառանգության, բնափիլիսոփայական, գոյաբանական, իմացաբանական, գիտական, կենսաբանական, փորձի՝ որպես փիլիսոփայական կատեգորիայի բարձրացման, բուսական և կենդանական աշխարհի իմացության, արվեստաբանական, երաժշտագիտական տեսությունները և նրա ընդհանուր աշխարհայացքին ու մատերիալիստական տեսնեցներին առնչվող բազմազան խնդիրները¹։

Հիշյալ բնագիրը, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, Հովհաննես Սարկավագի զրչին պատկանել չէր կարող։ Այն էլ ասենք, որ եթե Հովհաննես Սարկավագին աղատենք այս բնագրի հիման վրա արված բոլոր վերագրումներին, նա դարձյալ ամուր բաղձած կմնա իր պատվավոր պատվանդանին։

Ասվեց, որ քննարկվող բնագիրը գիտական մեծ արժեք է ներկայացնում բաղձաղան առումներով։ Ովքեր ծանոթ են տողատակ նշված մասնագետների ուսումնասիրություններին, քաջ գիտեն այն բոլոր երբեմն խիստ բարձր զնահատականների մասին, որոնք ընծայվել են այս բնագրին ընդհանրապես, նրա առանձին դրույթներին՝ մասնավորապես։ Որպեսզի ստույգ գաղափար տանք

¹ Գ. Գրիգորյան. Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները.— «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 95—110; Նույնի՝ Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները.— «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 188—200; Վ. Զալոյան. Հայոց փիլիսոփայության պատմություն. Երևան, 1975, էջ 376—383; Նույնի՝ Հայկական Ռենեսանս. Երևան, 1964, էջ 136, 137—138; Ս. Արևշատյան. Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում.— «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 79; Ն. Թաճիզյան. Էջեր միջնադարի հայկական երաժշտական զեղադիտությունից.— «Էջմիածին», 1963, № 11, էջ 59; Նույնի՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը. առանձնատիպ «Բաղմավեպից», 1979, № 3—4, էջ 11; К. Мирумян. Некоторые вопросы музыкальной эстетики Ованеса Саркавага.— «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 1, էջ 174—178; Նույնի՝ Հովհաննես Սարկավագի բնագիտական հայացքների շուրջը.— ՀՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1979, № 3, էջ 59—69; Նույնի՝ О мировоззрении Ованеса Имастасера.— «Լենինյան ուղիով», 1979, № 11, էջ 88—93; Նույնի՝ Հովհաննես Սարկավագի կենսաբանական հայացքները.— ՀՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1982, № 1, էջ 54—64։

նաև մեր ընթերցողներին, այստեղ, առանց մեր մեկնաբանություն, բերենք մի քանի քաղվածքներ, որոնք բնութիւնով ու բովանդակությամբ տարբեր են, իրոք ունեն շատ կարևոր արժեք ու նշանակություն և, միաժամանակ, ընդգծում են սույն հոդվածի հիմնական հարցադրման անհրաժեշտությունը:

1. [Աստուած] ոչ միայն արարիչ ասի, այլև արարչագործ, ղի իւր արարածքն այլոց արարիչ լինի[ն],

2. Տարերքս թէպէտ և հակառակ են իրերաց, այլ ի սոցանէ եղև աշխարհս,

3. Պարտ էր, որ յառաջ իրացն սկիզբն լինի և ապա այլք ի նմանէ ածեն.

4. Զի միտքն զգալեօքն շարժի, վասն որոյ և շգործէ միտքն նախքան զգալ,

5. Առանց պատճառի չկայ իրք,

6. Զեմ հայնց դիւրահաւան, որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից,

7. Թէ աշխարհիս տեսակքն եղականք են: Նայ ասել պիտի, թէ և այն առաջին նիւթն, որ կայր, եղական է, քանզի մասն ի բոլորէն ոչ բաժանի, ապայ թէ՛ այն նիւթն անլինելի է,

8. Մի՞թէ պատճառ կալոյ աշխարհիս [յ]աստուծոյ է, ո՛չ, այլ ի յերկնիցն շրջագայութենէ,

9. Մի՞թէ արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն և սարդն, որ ուսեալ է և կու մարթէ առնել, ո՛չ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստի ուսանելոյ, զի հնարքն և արուեստքն բանականի է,

10. Իսկ բնութիւն ամենայն իրաց ի յարմարութենէ ընդդիմակացն լինիցի, որպէս է տեսանել ի լարս քնարից, յորժամ սուրն և բուլն ընդ իրար միաբան հնչեն,

11. Տարերքս ի միմեանց վերայ մնան վասն այն, որ ճախարակապէս երկիրքն շրջի, և երկիրս՝ որպէս գունդ ի միջին է,

12. Քանզի մարդիկ թէպէտ տեսակաւ մի են և հաւասար, բայց գիտութեամբ և փարթամութեամբ անզոյգ են, որպէս է տեսանել ի տուն և ի քաղաք, որ շինել են և բնակին, իսկ մեղու և մրջիմն միապէս գործեն, և չկայ զանազանութիւն ինչ ի նոսա,

13. Առանց հոգւոյն շարժմանն կամեցան քերթօղք լինել. նայ մոլորեցան և անպիտան եղեն,

14. Զկան այլ ինչ իրք, որ սիրեն զմիմեանս և միաբանին, որպէս մասունք աշխարհիս, որ են տարերքդ, վասն ղի ի միմեանց էութենէ զոյանան,

15. Աչքն չկայ միշտ տեսանելիքս զնայ շարժեն, որպէս ձայնն՝ զաւկանջն,

16. Երկիրն և այլ տարերքն շարժական և փոփոխական է, բայց երկիրքն և արեգակն և լուսինն այլ կատարեալ ունին զիրեանց բնութիւն և բացեալ են ի մենէ,

17. ...այնոցիկ, որ պայծառ և պատուական զգեստիւր զարդարել են զհիւքեանս ի քաղաքի և հպարտանան ի վերայ ազքատաց և ծառայեցուցանեն իբրև զձիւս, ի դագաղս լծեն՝ շարշարելով զնոսա,

18. Քերթօղն արուեստախօսութիւնն է, որ զբանն սրբել և քերել գիտէ, իսկ քերականն՝ զրազիր,

19. Երաժիշտ էր, ուսուցանէր զգուսանս կանայս և վարձ առնոյր,

20. Զբարին և զըղորդն, որ ազատն է, զայն արհամարհեն ի քաղաքին, և զսուտն և զշարն գովեն, որ օտար է,

21. Որպէս և է տեսանել ի լարս քնարից և ի ձայնս եղանակաց, առաջինն սուր լինի և միջինն՝ բութ, և եղերին՝ կակուղ. և այնպէս յարմարին ընդ միմեանս, որպէս 2-ն (6) առ 7-ն (4), և 7-ն (4) առ 9-ն (3),

22. ...և այլ դարձեալ ասէ, բնութիւն աշխարհիս շատ իրք կու բերէ, որ չեն պէտք արուեստիս, առանց աշխատութեան կու լինի, ապայ արուեստիցս

խաճարարաց ի՞նչ մեղադրանք կայ, երբ նիւթն կու լինի. այն բնութեանս տուողին է մեղադրանք: Չայս իմ աներկչոտ միտս իմացաւ,

25. Անհնար է, թէ կերակուր չգտանեն լուսաւորքդ, թէ չշիջանին,

24. Դժուար է, եթէ միտք ոչինչ չգործէ և չջանայ. այն քարի նման է և անշնչից,

25. ...ապայ ես դայս առաջին և մեծ մահ սսեմ, որ կամօք ի տանէ եւ յազգէ օտարացաւ...

Այս մի քանի քաղվածքները, կարծում ենք, լիովին բավարար են ընդգրծելու համար քննարկվող բնագրի ակնհայտ արժեքն ու կարևորութիւնը: Ավելացնենք նաև այն, որ բնագիրս միջին հայերենի ուսումնասիրման համար խիստ օգտակար հուշարձան է: Այն ընդհանրապես հայ մեկնաբանական-փիլիսոփայական հարուստ գրականութեան և, մասնավորապես, Փրկոն Ալեքսանդրացու երկերի հայերեն մեկնութիւնների մեջ ունի առանձնահատուկ տեղ ու նշանակութիւն:

Փրկոն Ալեքսանդրացին (Եբրայեցին) հին աշխարհի (մոտավորապես մ. թ. ա. 20 թ.—մոտավորապես մ. թ. 50 թ.) խոշոր մատենագիրներից ու մտածողներից է, «բրիստոնեութեան իսկական հայրը», որի երկերը հայերեն են յարգմանվել դեռևս հայ գրականութեան արշաւուսին՝ V դարում: Նրա երկերին նվիրված մեկնութիւններով հանդես են եկել նաև հայ մեկնիչ հեղինակներ, որոնց անունները, դժբախտաբար, առ այսօր մնում են անհայտ, ստուգապես ճշտված չլինելու պատճառով:

Փրկոնի երկերի հայերեն մեկնութիւնների խնդիրն ինքնին շատ կարևոր է պատմաբանասիրական, գիտափիլիսոփայական և լեզվաբանական տեսակետից և սույն հոդվածը, կարծում ենք, մի համեստ նպաստ է նաև այս առումով:

Խնդիրը հետևյալն է.

Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Գ. Գրիգորյանը, ծանոթանալով Փրկոն Ալեքսանդրացու հայերեն մեկնութիւններին, կանգ է առնում մեկնութիւնների միահավաք մի փնջի վրա և եզրակացնում, որ այն Հովհաննես Սարկավագի գրչին է պատկանում և քննելով դրույթներից մի քանիսը, ընդգծում է դրանց խիստ կարևոր նշանակութիւնը միջնադարյան հայ մեծ մտածողի գիտական-փիլիսոփայական տեսութիւնների և աշխարհայացքի ուսումնասիրման համար²: Հովհաննես Սարկավագի գիտական ժառանգութեամբ զբաղվող մասնագետները, Գ. Գրիգորյանի հետևութեամբ, հետզհետեւ ավելի են ընդգծել մեկնութիւնների այդ փնջի շահեկանութիւնը, ավելի հաճախ ու հանգամանորեն հիմնվել դրա վրա, վստահ լինելով, որ հիշյալ մեկնութիւնների հեղինակային պատկանելութեան մասին նրա եզրակացութիւնը միանգամայն հավաստի է³: Մինչև Գ. Գրիգորյանը, Հովհաննես Սարկավագի մատենագրութեան միահավաք հրատարակութեան հեղինակ Ա. Աբրահամյանը ծանոթ է եղել սույն Մեկնութեանը, № 2595 ձեռագրի ստացողի և գրչուհու հիշատակարաններին և այն վերագրել է Հովհաննես Սարկավագին, սակայն չի զետեղել իր հրատարակութեան մեջ⁴:

2 Գ. Գրիգորյան. Փրկոն Ալեքսանդրացու աշխատութիւնների հայ մեկնութիւնները, էջ 105—110:

3 Տե՛ս Վ. Չալոյանի, Ս. Արեշատյանի, Ն. Թահմիզյանի, մանավանդ Կ. Միրումյանի վերոնշյալ աշխատութիւնները:

4 Ա. Աբրահամյան. Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը. Երևան, 1956, էջ 58, 316—318: Փրկոնի յոթ գրքերի (տե՛ս ստորև) մեկնութիւնների այս փունջը մեր հոգովածում կոչում ենք «Մեկնութիւն»՝ ձեռագրային ընդարձակ խորագիրը (տե՛ս ստորև) հաճախ չկրկնելու համար:

Վերջերս, երբ մեզ նս հարկ եղավ առնչվել քննարկվող սույն բնագրին, եկանք այն որոշակի եզրակացության, որ այն Հովհաննես Սարկավագի գրչարգասիք համարելը ակներևաբար զուրկ է որևէ լուրջ հիմքից:

Այս համոզմանն ենք եկել հետևյալ հիմնական պատճառներով.

ա. Գ. Գրիգորյանը նման եզրակացության հանգելու կայուն կովաններ չունի և նրա փաստարկումները համոզիչ չեն,

բ. Լեզվական հիմնական ատաղձը, որով հորինված է քննարկվող բնագիրը, զարգացած միջին հայերեն է, որոշակի որակով ու մակարդակով, որը անհարիր է նույնիսկ XII դարի կեսերի, ինչպես և, մասնալիար, Հովհաննես Սարկավագի մատենագրական ժառանգության լեզվական մշակույթին ու կառուցվածքին:

Նախ առաջին կետի մասին.

Գ. Գրիգորյանը Փիլոն Ալեքսանդրացու (Երրայեցու) մեղ հասած հայերեն մեկնությունները բաժանում է երեք խմբի, որոնցից «երկրորդ» խումբը նա հատկացնում է Հովհաննես Սարկավագին, որը և կաղմում է ինգրո առարկա սույն միահավաք բնագիրը: Այն առկա է մի քանի ձևագրերում, տարբեր ծավալով. առավել ընդարձակ ընդօրինակությունը պահպանված է Նաշտոցի անվան Մատենագրարանի № 2595 և Ղալաթիո աղգային մատենագրարանի № 69 ձևագրերում⁶: Հիմնականում № 2595 (1787 թ.) ձևագիրն էլ նյութ է մատակարարել նրա եզրահանգումներին:

Ձևագիրը բաղկացած է երկու մասից.

1. Գիրք Փիլոնի Իմաստասերի Երրայեցու, որ ունի լինքեան լրապէս գեթնեսին գիրս նորին, այսինքն՝ ա—զլինելութեան, բ—զոր Երեցան. գ—զոր յնլն, դ—զնախախնամութեան, ե—զկեանք իմաստնոցն, այսինքն՝ նահապետացն, զ—զԱլաբանութիւնն, է—զՀաստեայն,

2. Լուծմունք եթնից գրոցն (վերոհիշյալ—Փ. Ա.) Փիլոնի Իմաստասիրի Երրայեցու⁷:

Այս երկու հիմնական մասերի արանքում, Փիլոնի երկերից անմիջապես հետո, առկա է Հովհաննես Սարկավագի «Յաղագս անկինաւոր թուոց» թվաբանական աղյուսակը՝ ընգամենը մի քանի էջից բաղկացած առընթեր բնագրով⁸:

Ձևագրում պահպանված են ստացող Իսահակ եպիսկոպոս Գեղամեցու հետևյալ շատ կարևոր երկու բացատրական հիշատակարանները.

ա. Ձկնի որոց (գրոց Փիլոնի—Փ. Ա.) գոյ և լուծմունք գեղեցիկ ի յնթնեսին գիրս սորին, ի դժուարիմաց բանսն: Յումմէ գոլն՝ անյայտ, զի ոչ գոյր, ի խորագիրս օրինակին անուն լուծողին: Այլ լուծողն, ո և իցէ (ընդդժումը մերն է—Փ. Ա.), ոչ ըստ դոյն վերոյգրեցեալ կարգիդ դասէ զնթնեսին գիրսն, ալ յառաջ «նախախնամութեան» գրոցս դնէ զլուծմունս, ապա՝ «Լինելութեան», ապա՝ «Ելիցն», ապա՝ այնմ թէ՛ «Որ երեցաւ» (որ է Բան շորորդ ի վերայ երից Բանից Լինելութեան գրոցն), ապա՝ «Ալաբանութեան», ապա՝ «Նահապետացն» եւ ապա՝ «Հաստեայցն»: Եւ ի վերջն Բնաբանին, նախքան «լուծմունս», գոյ և ի Յովանիսէ Սարկաւագ վարդապետէ. «Բան վասն Անկինաւոր թուոց», գեղեցիկ իմն խրատիւք և աղիւսակօք, զորս ի միոջէ գեղեցկագիր տփոյ ետու օրինակել վասն իմ, ի Կոստանդնուպօլիս, նուաստ Իսահակ ապարդին և բաղմամեղ վարդապետս Գեղամացի, որ եմ միաբան սրբոյ և լու-

5 Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 99—103:

6 Տե՛ս Նաշտոցի անվ. Մատենագրարանի (ՄՄ) № 59 (Նախախնամություն, Լինելություն, Ելից, 9բ—42ա), 437 (Նախախնամություն, 110բ—116ա), 1053 (Ելից, 344ա—357ա), 1483 (Ելից, 565բ—574ա), 2595 (լրիվ լոթ Գրոց, 241բ—280ա) և Ղալաթիո աղգային մատենագրարանի № 69 (լրիվ լոթ Գրոց, 619ա—763բ) ձևագրերը:

7 Տե՛ս ՄՄ, ձև. № 2595, էջ 2ա—241ա, 241բ—280ա:

8 Նույն տեղում, էջ 236բ—240ա:

սակերտի Աթոռոյս էջմիածնի, աշակերտ և օրհնածին որդի տեառն Սիմէօնի
երջանկափայլ, գիտնական, սրբազան կաթողիկոսին երևանեցուց... Ի հայրա-
պետութեան տեառն Ղուկասու հոգեւորտիր և սրբազան կաթողիկոսի ամենայն
հայոց Կարնեցոյ... յորմէ և առաքեցեալ իսկ ի գործ նուիրակութեան, նոյնոյ
կայսերական քաղաքին, ի թուոջ փոկչին ՌՉԶԷ (1787) և ի մերում թուոջ
ԻՄԼԶ (1787)⁹։

բ. «...Որ ոչ ունի (Լուծմունք Եօթնից զրոցն...—Փ. Ա.) ղնոյն դասն, զոր
բնաբանն ունի, այլ յետ և առաջ, որպէս և ի սկիզբն զրոցս ցուցար, արարեալ
ի մերոյ վարդապետաց, որպէս ցուցանէ կերպն շարադրութեան։ Այլ յումմէ,
գոյն՝ անյայտ, զի չկայր յօրինակին անուն լուծողին։ Բայց զի «Անկիւնաւոր
թուոց» խրատն, որ ի վերջ է, Սարկաւագ Յովհաննէս վարդապետն է արարեալ,
և ևս զայն ընդ սոյն զրոցս և սոյն դասութեամբ ի միում տփոյ գտի, վասն
որոյ րոնցաւ ինձ, քէ և զայս լուծմունքս նա իցէ արարեալ, Բանգի և Բանն
համանման երեկ եոցին շարադրութեան. առ քէ՝ ի նմանէ իցէ և քէ՝ ոչ, սա-
կայն մերոց վարդապետաց երեկ արարեալ (ընդգծումը մերն է—Փ. Ա.), զոր
բնաբանին օրինակելու ետու ի Կոստանդնուպօլիս։ Ամենանուստ Իսահակ
Եպիսկոպոս Գեղամացի, ի թուոջ փոկչին ՌՉԶԷ (1787) և ի մերում՝ ԻՄԼԶ
(1787)¹⁰։

Ինչպես սույն դուրս հիշատակարանների մեջ էլ է ընդգծվում, Մեկնու-
թյունը չունի հեղինակի անվան հիշատակություն, միայն ստացողն է տարա-
կուսանքով ու զգուշ վերապահությամբ ենթադրում, թե՛ թերևս Հովհաննէս
Սարկավագն է՝ դրա հեղինակը, քանի որ ձեռագրում առկա է նրա հիշյալ թվա-
բանական աղյուսակը և Մեկնությունը «համանման երեկ նորին շարադրու-
թեան», սակայն նա ստուգապես այս Մեկնության հեղինակն է թե ոչ՝ ստա-
ցողը, ինչպես տեսնում ենք, հաստատ չի հավակնում ասել։ Ձեռագրում Հով-
հաննէս Սարկավագի մասին ուրիշ ոչ մի հիշատակություն և նրան առնչվող
կուվան չկա։

Գ. Գրիգորյանին հայտնի էր միայն այսքանը, այսինքն այն ամենը, ինչ
հնարավոր էր, և հիմնվելով հնարավոր վարկածներին վրա, նա կառուցել է իր
հղրակացությունը։

Առաջին վարկածը, ըստ որի իբր մեկնությունը կարող էր գրված լինել
միայն XI—XII դդ., իսկ հեղինակը կարող էր լինել միայն Հովհաննէս Սար-
կավագը¹¹, ճիշտ չէ. նախ այն պատճառով, որ Մեկնության լեզվական ատաղ-
ձը մեզ տանում է մինչև XIV դար, երկրորդ՝ ձեռագիրը ոչ մի կերպ մեզ չի
սահմանափակում XII և ոչ էլ XIII դարով՝ 1238 թ.։ Այս 1298 թվականը ոչ թե
№ 2595 ձեռագրի նախագաղափարի, այլ նրա նախագաղափարի նախագաղա-
փարի, թերևս և վերջինիս նախագաղափարի ընդօրինակության տարեթիվն է
այսինքն № 2595 ձեռագիրը ընդօրինակվել է ոչ թե 1298 թվականի գրչագրից,
այլ անպայման նրանից ավելի՝ ուշ ընդօրինակված մի այլ՝ ձեռագրից, որի
գրչության ժամանակն ու գրիչը անհայտ են եղել № 2595 ձեռագրի Բրաբիոն
գրչուհուն։ Ահա նրա վկայությունը. «Հեղինակն մատենիս գաղափարեալ էր
ի ԷՃԽԷ (1298) թուականի՝ գրեցելոյ յԱրմէնի անասլատոջ, բայց թուականն
գալափարեցելմանն և անունն գաղափարողին ոչ էր գրեալ...»¹² (ընդգծումը
մերն է—Փ. Ա.)։ Եթե 1298 թ. վերաբերում է Արմեն անասլատում ընդօրինակ-
ված ձեռագրին, ապա՝ ո՞ր ձեռագրին են վերաբերում ընդգծված տողերը։ Եվ
միթե ամեն ինչ որոշակի չէ, երբ խոսքը «գաղափարեցելմանն», այսինքն՝ այդ
ժամին ընդօրինակության նախագաղափար հանդիսացող ձեռագրի մասին է՝
Հետևաբար, № 2595 ձեռագիրը ընդօրինակվել է թվականն ու գրիչն անհայտ

⁹ Նույն տեղում, էջ 2ա։

¹⁰ Նույն տեղում, էջ 241ր։

¹¹ Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 100։

¹² Տե՛ս ՄՄ, ձեռ. № 2595, էջ 280ա։

ալի «նախագաղափարեցեալ» ձեռագրից: Ինչպես ասվեց, № 2595 ձեռագիրը բաղկացած է երկու մասից, առաջինը՝ Փիլոնի երկերից, երկրորդը՝ նրանց նվիրված սույն Մեկնությունից: Գրիգորյանի վկայակոչած 1298 թ. մասին վկայող հիշատակարանը գրված է Փիլոնի երկերից անմիջապես հետո և վերաբերում է դրանց երբեմնի (1298 թ.) և ոչ Մեկնության ընդօրինակությանը: Որ այդ այդպես է, երևում է նաև նրանից, որ երկրորդ մասը՝ Մեկնությունը համարակալված է նոր պրականիշով՝ Ա. Բ. Գ. և այլն, ինչպես այն եղել է № 2595 ձեռագրի թվականն ու գրիչն անհայտ նախագաղափար օրինակում: Այստեղից ավելի քան պարզ է, որ 1298 թ. ընդօրինակվել է առաջին մասը (Փիլոնի երկերը), հանդերձ՝ Հովհաննես Սարկավազի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աղյուսակով, և միայն հետագայում, հայտնի չէ երբ, անժանոթ գրչի կողմից նրան է միացվել երկրորդ մասը՝ Մեկնությունը և ապա շարունակաբար միատեղ ընդօրինակվել:

Այս են հաստատում նաև Նրուսաղեմի № 157, 333 ձեռագրերը, որոնք վկայակոչված 1298 թ. հիշատակարանը ունեն նույնությամբ Փիլոնի և Հովհաննես Սարկավազի հիշյալ երկերից հետո, բայց չունեն սույն Մեկնությունը¹³:

Այս առնչությամբ ուշադրության արժանի է մասնավորապես Ղալաթիո Ա՝ 69 ձեռագիրը, որը նույնական է մեր № 2595 ձեռագրի հետ¹⁴ և, շատ հավանական է, հանդիսացել է վերջինիս նախագաղափար օրինակը, որի մասին խոսք եղավ քիչ վերը: Ձեռագրացուցակի հեղինակ Բ. Կյուլեսերյանը ձեռագիրը հնագրական առումով բաժանում է երկու մասի. առաջին՝ Փիլոնի երկերն ու Հովհաննես Սարկավազի հիշյալ աղյուսակը, երկրորդ՝ Մեկնությունը: Առաջինը, ոչ առանց տարակուսանքի, թվագրում է 1298 թ., տեղը՝ Արմենի անապատ, գրիչը՝ Վահրամ Սարկավազ, հիմնվելով ձեռագրում պահպանված մեզ հայտնի 1298 թ. հիշատակարանի վրա: Երկրորդի ժամանակն ու գրիչը թողնում է անհայտ, ինչպես և եղել է № 2595 ձեռագրի նախագաղափար օրինակում: Բացի այդ, № 2595 ձեռագիրն ընդօրինակվել է Կոստանդնուպոլսում, որտեղ և (Ղալաթիա) եղել է սույն № 69 ձեռագիրը:

Այսպիսով, 1298 թ. և այդ թվականի մասին խոսող հիշատակարանը իր բոլոր ընդօրինակությունների մեջ ուղղակի և ոչ մի առնչություն չունի Մեկնության հորինման ժամանակի (XI—XII դդ.) որոշման հետ: Գիտել տանք նաև այն, որ Հովհաննես Սարկավազը մահացել է այս թվականից շուրջ 70 տարի առաջ և այս ընթացքում կարող էին Մեկնության հեղինակ հանդիսանալ այլ անձինք: Վերջապես, այս առիթով չի կարելի անտեսել նաև այն, որ այսպիսի մեզ չի հասել Մեկնությունը պարունակող որևէ ձեռագիր XI—XII դդ.: Մեկնության ամենավաղ ընդօրինակությունը (ոչ լրիվ) պահպանվել է Մաշտոցի անվան Մասենադարանի № 437 ձեռագրում, որը 1282—1283 թթ. զբղջություն ունի:

Անհրաժեշտաբար հանգամանորեն տրված այս բացատրությունից, կարծում ենք, պարզ է դառնում, որ Մեկնությունը անպայման XI—XII դդ. հորինված կարող էր չլինել և չէ՛, ինչպես ավելի որոշակի կտեսնենք ստորև. հե-

13 Ն. Պողոսյան. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց. Ա, Նրուսաղեմ, 1966, էջ 468—470, հ. Բ, Նրուսաղեմ, 1967, էջ 209—210:

14 Բ. Կյուլեսերյան. Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո աղային Մատենադարանի. Անթիլիաս, 1961, էջ 476: Զի կարելի համաձայնվել Գ. Գրիգորյանի այն կարծիքին, ըստ որի իբր № 2595 ձեռագիրը ընդօրինակվել է Նրուսաղեմի № 333 ձեռագրից (տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 97): Դրա համար ոչ մի հիմք չկա, մասնավորապես որ № 333 ձեռագիրը չունի Մեկնությունը. ինչպե՛ս կարելի է չեղած նյութը ընդօրինակել: Բացի այդ, № 333 ձեռագրի Կոստանդնուպոլսում (որտեղ ընդօրինակվել է № 2595 ձեռագիրը) լինելու մասին ո՛չ փաստ կա, ո՛չ էլ հավանականություն, մինչդեռ Ղալաթիո № 69 ձեռագիրը և՛ բովանդակությամբ նույնական է № 2595 ձեռագրին, և՛ ընդհանրապես գտնվել է Կոստանդնուպոլսում (Ղալաթիո թաղում): Ուստի, խիստ հավանական է, որ հենց այս № 69 ձեռագիրն էլ հանդիսացել է № 2595 ձեռագրի նախագաղափարը, և ոչ երեսը Նրուսաղեմի № 333 ձեռագիրը:

տևարար, միակ հնարավոր հեղինակը Հովհաննես Սարկավագը կարող էր չլինել և չէ՝, ինչպես դարձյալ պիտի տեսնենք ստորև:

Դ. Գրիգորյանի երկրորդ վարկածը կառուցված է հետևյալ իրողությունների վրա. «Համարյա միշտ» Փիլոնի երկերի հայերեն մեկնությունների հետ առկա է Հովհաննես Սարկավագի «Յաղագս անկիւնաւոր թուոց» փոքրիկ երկը¹⁵: Բայց և «ոչ միշտ» (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի № 59 ձեռագիրը), իսկ եթե առկա է, ապա Փիլոն Ալեքսանդրացու երկերից հետո և ոչ, մանավանդ, քննարկվող Մեկնության սկզբում. նրուսադեմի վերոհիշյալ № 157, 333 ձեռագրերը ունեն Փիլոնի երկերին առնթեր Հովհաննես Սարկավագի նշված երկը, այն զեպքում, երբ քննարկվող Մեկնությունը նրանցում իսպառ բացակայում է: Այս բացատրելի է այն պարզ պատճառով, որ Հովհաննես Սարկավագի երկի առնչությունը Փիլոնի երկերի հետ է և ոչ Մեկնության, որովհետև Փիլոնի երկերը, ինչպես վաղուց արդեն նկատված է, նրա համար սկզբնաղբերու են հանդիսանում¹⁶: Ըստ այսմ, Գ. Գրիգորյանի այս վարկածն էլ, թվում է, բարեհաջող համարել չի կարելի:

Նրա երրորդ վարկածը հիմնված է Մխիթար Այրիվանեցու այն վկայության վրա, ըստ որի Հովհաննես Սարկավագը «ստուգաբանել և խմբագրել» է «նուրբ գրեանք», այդ թվում՝ Փիլոնի երկերը¹⁷: Արդյո՞ք այս նշանակում է, որ Հովհաննես Սարկավագը անսպասման Փիլոնի երկերի մեկնություն էլ է գրել, այն էլ հենց այստեղ քննարկվող Մեկնությունը: Իհարկե՝ ոչ, մանավանդ, երբ այս մասին ոչ մի տեղ և ոչ մի տվյալ չկա:

Ինչ վերաբերում է չորրորդ վարկածին, մեր կարծիքով, այն առաջադրելու ոչ մի հիմք չի եղել: Խոսքը վերաբերում է Հովհաննես Սարկավագի երկերի և Մեկնության լեզվաբանական իբրև թե նմանությանը¹⁸: Բազմաթիվ զուգահիշ համեմատություններով կարելի է ասպացուցել հակառակը: Գաղափար կալմելու համար այժմ կարելի է գոհանալ և մեկ նմուշով.

Հովհաննես Սարկավագ

Ո՞վ անդգայտթեան ինչ մոլորութեան իմոյ լարուր. ո՞չ անգիտութեամբ ինչ գայթակղեալ սխալեցի և ո՞չ խարեալ յումեքէ, ըստ որում յոլովր մոլորեցան: Ի նախնեաց բարեւայաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, ձեռադէմ գործեցի, որք սնուցին զիս արինաւք հոգւոյն կենաց առաւել քան զբնութեանն տաժիւր խնամոյ առ մանկունս, որովք յառաջնում հասակին զաստիարակեալ յոյս տալի քաջութեան: Եւ հանդիպեցաւ ալ ընդ այլոյ շար ուսմանցս և վատարարոյից ընդունելութեամբ և յարութեամբ խեղկեալ զնոյն մակըստարանութիւն, քանզի ընդ սուրբս ի մանկութենէ կենցաղավարեալ զարգանայի...

Իսկ արարդիւտ այսպէս արա լուսնի. կալ զրովպէն և ած ի վերայ զվեցեակն և զթիւ վաթսուիցն և կարես գտանել զքանիս ժամուցն և զթիվս մասանցն: Բայց ըստ փոփոխման հանցես զժամսն յառաւելուն և ի

Մեկնություն

Արդ, այս օրինակաւ, որ ես եմ ի կարծել, ամենայն մահկանացու կենդանիքդ, զայրդ ի մարդոյս, սուտ են եթէ նորա հակառակութիւն և միարանութիւն ունին և կամ գիտութեամբ առնեն: Բն. վասն որոյ և արագիլ ոչ փոխանակ լծ. արագիլն, որ փոխանակ կերակրէ զծնողն, ոչ եթէ վասն այն առնէ զայն, որ զանիրաւութիւն պարտ է և տանջէ և գիտէ թէ այս արդարութիւն է, այլ առաւել անիրաւութիւն է այն, որ չգիտէ թէ ես արդարութիւն կու առնեմ...

կամ՝

Լծ. անասնոյդ ձայնն մի ոլորակ ունին, ամէնն՝ անյօդ, զի և ոչ իբրև փողից և քնարաց շեն, որ թէպէտ անյօդ են, այլ զօրութիւն բանի ունի ի հնչումն. և քեզ օրինակ այն որ զիւրաւ յորժամ կամին զձայնքն յոլով զանազանութեամբ, խաղու, պատերազմի և այլ զինչ կամիս: Եւ լսողքն միտ զնեն, թէ ինչ կա-

15 Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 100:

16 Ա. Արքաւհամյան. նշվ. աշխ., էջ 58—59:

17 Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 100:

18 Նույն տեղում, էջ 101:

նուազեցնել տուրքերն և // գիշերոյ քանդի ընդ տիւ և ընդ գիշեր ԻԴ (24) ժամք են միանգամայն և հաւասարին միմեանց գարնանային և աշնանային ժամանակի: Եւ անհասարք գոն ըստ ամարան և ձմեռան յեղանակի, ար ըստ աւուր մասանցն թուովք և ըստ ամսոյն ժամութն, վասն որոյ գիտել պարտ է զաճումն տուրքեան և զնուաստանալ գիշերոյն, սկսեալ ի ձմեռան յեղանակէ և յաժեղջիւր կենդանակերպէն մինչև յամառնայինն յեղանակ և ի խեցգետին կենդանատեսակ...

Բայց ըստ արուեստի և մակադոսթեան հնար է մերթ մերձն առ ճշմարտութիւն, և զայսոսիկ դարձեալ երկակի և կամ աւել և կամ սուղ գտանել, այլ ի ստույթենէն ամենևին հեռու լիցութ և յանուանեցելոցն պիտակաբար իմաստակա կամ մահացուս խոյս տացութ, զի մի ընդ վայր և նանիր աշխատութեամբ մաշեցութ զկեանս, և փոխանակ շահից, տուգանս ժողովեցութ...

(Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 127, 208, 255):

մի փողն հարկանել: Եւ զանասնոցն ձայն զեղ փողոյ և քնարի կու ասէ, զի զձայնին վերացումն միայն ունին անասունքն զեղ զփող և զքնար: Ապա երկուքն անյօդ են, զի բառի շնոր յօդել և նշանակել, որպէս ոլորակաւ կու նմանեն մարդոյ ձայնի: Եւ դիրափոփոխ զյօդաւորին, կու ասէ, զմարդոյն, որ նշանակող է. որ լսողքն կու լսեն միապէս. զփողոյն և զանասնոցն շնոր ի լսելիս միապէս: Ի յոլորակաւ կանի խաղսն, որ զձին վազեցնեն, որպիսի հեծելոյն տան վարձ մրցանակ, այնչափ կրկին՝ ձիաբուծին, որ ձին է պահել...

(ՄՄ, ձեռ. № 2595, էջ 251ա, 253ա):

Կա և հինգերորդ վարկն՝ որի վրա «ամենից առաջ և մեծ շափով» է իր եզրակացութիւնը հիմնել Գ. Գրիգորյանը. այդ էլ իբր Հովհաննես Սարկավագի գիտական ժառանգութեանն ու քննարկովոյ Մեկնութեանը հատուկ գաղափարական և աշխարհայացքային ընդհանրութիւնն է¹⁹: Այստեղ, ինչ խոսք, ճշմարտութիւն կա, բայց ոչ այնպիսին և այն շափով, ինչպիսին և ինչ շափով որ մատնանշվում է: Այդ շափը առկա է նաև Անանիա Շիրակացու, Վահրամ Ռաբունու, Հովհաննես Երզնկացու, Թերնս և այլ հեղինակների համապատասխան երկերի և սույն Մեկնութեան միջև: Նշված ընդհանրութիւնը հաճախ գալիս է սկզբնաղբյուրների և հենց մեկնվող երկերի ընդհանրութիւնից. այսինքն, դրանք են թելադրում մեկնաբանող երկերի բովանդակութեան բնույթը: Պարզ է, «Երգ երգոց»-ի մեկնութիւնները բովանդակութեամբ, արծարծված հարցերի ընդհանրութեամբ, շեն կարող նման լինել, ասենք «Պրնընդոց»-ի մեկնութիւններին: Այս դեպքում էլ նույն իրողութիւնն է: Գ. Գրիգորյանի կողմից նշված ընդհանրութիւնները ցույց տվող երեք կետերն էլ, որոնք իբր «բնորոշ են միայն Հովհաննես Սարկավագին, և հայագիտութեանը հայտնի չէ այդ դարերի մի այլ մտածող, որն արտահայտեր նման հայացքներ...»²⁰, նկատելի են հենց Փիլոնի մեկնվող երկերում, շատ ավելի ընդհանուր և գոթեթե նույնական են նրանց հետ, քան Հովհաննես Սարկավագի կամ մեզ ծանոթ մեկ այլ հեղինակի երկերի հետ:

Այսպես, օրինակ, առաջին կետը նա առնչում է Հովհաննես Սարկավագի քաջ հայտնի «փորձի» տեսութեանը, հիմնվելով Մեկնութեանից քաղված հետևյալ պարբերութեան վրա. «Զեմ հայնց դիրաճաւան, որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատիւի, զի առանց քննելոյ և փորձելոյ է պատեհ հաւանել ամենայն բանից»²¹: Նախ ասենք, որ այս խոսքերը Մեկնութեանի մեջ վերագրված են ուղղակի Փիլոնին, նրա կողմից են ասված և ոչ մեկնիչի. այս պարբերութեան անմիջական շարունակութեան մեջ, որը, դժբախտաբար, Գ. Գրիգորյանը չի մեջբերել, կարգում ենք. «Թէև իմ եղբօր որդոյն՝ Աղեքսանդրու բանն լինի», երկրորդ՝ այս խոսքերը ասված են Փիլոնի հետև-

¹⁹ Նույն տեղում, էջ 101:

²⁰ Նույն տեղում:

յալ խոսքերի առնչությամբ և նրանց ուղղակի հարասությունն են. «...ոչ ընդ նոյն հաւանեալ եմ, ընդ որս՝ սակաւամիտքն... բայց ճշմարիտ ըստ որում քնաւորեալ ունել, յուղղել քննեցից... առաւել հարցափորձեալ ամենեցուն բան վարդապետեցից, քանզի փոյթ է ինձ ոչ հաւանական բանագտութեամբք միշտ պատրիլ, դի ոչ զեղբօր որդին մեր, որովք գրեաց, յառաջ քան զընդդէմսն ստուգ ուսանել՝ յառաջագոյն հաւատալ»²¹, քիչ հետո նույն Փիլոնը իր եղբորորդուն ասում է. «Բայց ընդ միտ ած սոյնպէս՝ հարցանելով և քննելով, եթէ՝ ոչ, վրիպիմք ի խորհրդոյ»²², Այս խոսքերի մեկնիչը ուրիշ ի՞նչ կարող էր ասել, քան այն, ինչ ասված է Մեկնութեան վերոբերյալ պարբերութեան մեջ, և մի՞թե Հովհաննէս Սարկավագի հեղինակային մասնակցութիւնը այս դեպքում անառարկելի պայման է:

Երկրորդ կետի պարագան նույնն է բացարձակապես: Այս առիթով, թեկուզ և ոչ անմիջականորեն, շոշափված է Հովհաննէս Սարկավագի՝ արվեստի վերաբերյալ հանճարեղ տեսութիւնը, որին իբր համամիտ («միտքը նույնն է») են Մեկնութիւնից բաղված հետևյալ խոսքերը. «Միթէ՞ արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն և սարդն, որ ուսեալ է և կու մարթէ առնել, ո՛չ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստի ուսանելոյ»²³: Այս՝ այն դեպքում, երբ Հովհաննէս Սարկավագը արվեստին նվիրել է ամբողջ մի պոեմ, այն էլ՝ ինչպիսի՞, իր ժամանակի համար բացառիկ երևույթ, մինչդեռ այստեղ ընդամենը մատնանշվում է մեղվի և սարդի գործելակերպի բնաղղային լինելը, այն էլ միայն ի բացատրութիւն Փիլոնի հետևյալ խոսքերի. «Նոյն օրինակ մեղուք, անուսումն բնութեամբ զխորիսխն գործեն, և սարդք՝ ինքնուսումնակի դայնս, որք յանկանելն զբարեգործութիւնսն կաղմեն»²⁴: Պոեմում դիմադրաբար անձնավորված Սարկակի (որը «ուսուցիչ» է փիլիսոփաների և բանաստեղծների) և այստեղ հիշատակված մեղվի ու սարդի (որոնք, ըստ Մեկնութեան առաջիմ անհայտ հեղինակի, միշտ միևնույն գործն են կրկնում և ստեղծագործական ոչինչ չունեն՝ «միապէս գործեն և չկայ զանազանութիւն ինչ ի նոսա»)՝²⁵ միջև հավասարութիւն դնելը, թվում է, չի կարող նպաստել Հովհաննէս Սարկավագի հեղինակային իրավունքի հաստատմանը:

Երրորդ կետի վերաբերյալ մեր ասելիքը նույնն է: Այս առնչությամբ խոսքը եղել է այն մասին, որ և՛ Մեկնութեան հեղինակի, և՛ Հովհաննէս Սարկավագի տեսակետները առասպելների մասին համապատասխան են իրար, երկուսն էլ մերժում են դրանք: Բայց, դեռ չհաշված այն, որ առասպելական «կիկլոպներին» չհավատալու վերաբերյալ Մեկնութեան մեջ ասված խոսքերը դարձյալ Փիլոնին են հատկացված, ուղղակի առնված են նրա բնագրից, այսինքն՝ մեկնվող երկից, ինչով է բացառվում, թե առասպելների կամ այլ սնոտիապաշտական որոշ երևույթների դեմ չէր կարող արտահայտվել ԱԻ--XII գլ. (թեկուզ և առաջ կամ հետո) ապրած մի այլ հեղինակ: Չէ՞ որ եթե ինքը՝ Գ. Գրիգորյանը հնարավոր է համարում, որ Մեկնութիւնը կարող էր և XI դարում հորինված լինել, ուրեմն և հնարավոր է համարում (և դա շատ բերական է), որ Հովհաննէս Սարկավագից բացի, XI դարում, գոնե մինչև 70-ական թթ., երբ նա դեռ նոր էր մտնում գիտական ասպարեզ, մեկ այլ անձնավորութիւն ևս ի վիճակի կլիներ ծխտել առասպելները ընդհանրապես, կամ դե՛ նրանց սնոտի կողմերը: Ուստի, երրորդ կետն էլ այս կապակցությամբ հազիվ կառելի լինի լուրջ, ընդունելի կովան համարել:

Այսպիսով, կարծում ենք, ավելի քան հստակ է դառնում, որ Գ. Գրիգորյանի բոլոր վարկածներն էլ, ենթակովաններով հանդերձ, անառարկելի փաս-

21 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 2595, էջ 193ա:

22 Նույն տեղում, էջ 193ա:

23 Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 102:

24 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 2595, էջ 193ա:

25 Նույն տեղում, էջ 250բ--251ա:

տերով չեն հագեցած, համողիչ չեն և պարզ է, որ դրանց հիման վրա Հովհաննես Սարկավազին սույն Մեկնության հեղինակ համարելը չի կարող հիմնավոր և ընդունելի լինել:

Մեզ թվում է, այսքանով էլ կարելի էր բավարարվել, եթե ընդունենք, որ քննարկվող հարցի մեջ գիտական անհրաժեշտ ճշտումն ապահովված է. սակայն, նկատի ունենալով հարցի ակներև լրջությունը, մանրամասնում ենք մեր խոսքը, բերում ենք լրացուցիչ, մեր կարծիքով, իրապես հիմնավոր և առարկայական փաստ: Այդ Մեկնության լեզուն է ընդհանրապես, նրա կառուցվածքը, քերականական ձևերը, բառապաշարը, մի խոսքով՝ այն զարգացած միջին հայերենը, որը լիովին բացակայում է Հովհաննես Սարկավազի մատենագրական ողջ ժառանգության մեջ և ժամանակագրականորեն անհամարժեք է դրան: Այսպես ենք դատում նկատի ունենալով Մեկնության մեջ օգտագործված միջին հայերենի ողջ համակարգը և ոչ առանձին գրություններ ու երևույթներ, որոնք XII դարում երբեմն հանդիպում են մանր երկերի, դրագրությունների և վիմական արձանագրությունների մեջ, բայց ոչ երբեք փիլիսոփայական-մեկնաբանական երկերում, ինչպիսին է քննարկվող Մեկնությունը և ոչ էլ, մանավանդ, այդպես՝ միատեղ ու համաձուլ: Լեզվական այս իրողությունը ավելի քան ճշմարիտ է հատկապես Արևելյան Հայաստանի համար, որ ապրել և ստեղծագործել է Հովհաննես Սարկավազը:

Մանրազնին համեմատությունը ցույց է տալիս, որ այն Վահրամ Ռաբունու, Հովհաննես Նրդնկացու, Հակոբ Ալայեցու (բոլորն էլ XIII դարի կեսից հետո ապրած և ստեղծագործած) միջին հայերենով հորինված երկերի լեզվի հետ թեև երբեմն ունի մերձավոր առնչություններ, սակայն շատ ավելի պատշաճում է հետագա, օրինակ՝ XIV դարի հեղինակ Հակոբ Արակացու²⁶ միջին հայերենով գրված երկերի լեզվական ամբողջությանը, մինչդեռ, ինչպես արդեն ասել ենք, Հովհաննես Սարկավազի երկերում միջին հայերենի հետոն իսկ չկա: Եթե անգամ փորձենք ենթադրել, թե Հովհաննես Սարկավազը թերևս գրած լինի նաև միջին հայերենով՝ անհիմն կլինի, քանի որ նա նման միջին հայերենով գրել չէր կարող. միջին հայերենի զարգացման ժամանակագրական պատկերը բացառում է այդ հնարավորությունը:

Թողնենք, որ փաստերն իրենք խոսեն և խոսեն հանգամանորեն ու ավելի համողիչ, դարձյալ նկատի ունենալով հարցի ոչ միայն բանասիրական-բնագրագիտական, այլև գիտական-փիլիսոփայական ծանրակշիռ նշանակությունը: Նախ բերենք ևս մի (տեղի սղության պատճառով՝ միայն մեկ) դուգադիր համեմատություն՝ Հովհաննես Սարկավազի և Մեկնության լեզվական պատկերի մասին անմիջական գաղափար տալու համար: Բերում ենք հատկապես նրա «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ից մի հատված, քանի որ այն բանասիրության մեջ, ինչպես տեսանք, ուղղակի առնչվում է Փիլոնի երկերի և քննարկվող Մեկնության հետ, ուստի, ենթադրելի է, որ լեզվական առումով էլ համեմատաբար ավելի մոտիկ պիտի լինեն նրան... բայց...

Հովհաննես Սարկավազ

Յաղագս անկիւնաւոր քուոց...

«Լուծմունք Լօթնից գրեանց...»

«Զի յուսումնասէր մանկանց, որք կամիցին և ախորժեն զվարժումն, որ ըստ բնութեան թուոց անաշխատք եղիցին յայնոսիկ և գիւրաւ զԿ (60) և Դ (4), ասէ, որ ի յուր Ը-ից (8) գոյանայ, նայ առաջին չկարէ լինել, այլ՝ երկ-րորդ: Արդ՝ առաջին Ը-ին (8) օրինակէ զազգն»

²⁶ Հակոբ Արակացին մատենագիտությանը առ այսօր հայտնի է իբրև «ստացող» Փիլոնի երկերը սլարոնակող ձևագրի, սակայն մենք Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1919 (146ս — 155բ) ձեռագրում հայտնաբերել ենք Դրիգոր Նյուսացու «Աւ որս» երկի նրա մեկնությունը, որը այս առումով շատ հատկանշական է. «Դրիգոր Նիւսացույ Եւթն Դրոց լուծմունք՝ արարեալ Յակոբայ Կրակցո վարդապետի.— բն. վարդեօք. լծ. ո՞վ է այժմ յայս ժողովս...»:

հասցեն ըստ տուեցելոյ առաջին եղելոյ կանոնացոյ, որում ախորժենն:

Արդ՝ առաջին խորանոյդ՝ եռանկիւնեացոյ սկսեալ մինչ ի շորեքտասան անկիւնսն՝ թիւ ունի՝ ընդ ըրորոշսն և դարձատսն կարգ ըստ կարգի դասնալ, զի անաշխատ եղիցիս իսկ այլ երկու կարգքն ոչ այսպէս, այլ մի արձատն և միւսն ծնունդքն՝ զանազանեալք ըստ խոր-

ըրորոց...
(Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 148):

Իսրայէլ առաջին լինել, ոչ եթէ լինելութեամբ ծննդեանն, այլ առաւել առաքինութեամբն: Ան կամ թէ՛ հանգիտութիւն զքուեայն ասէ, որ քուեայ ձեն (Բ) (2) շորք անկիւնի է. մէկն՝ ներքինն, որ զեղ տան գետին է, և մէկ այլն՝ վերին, զեղ տաներք, կամ վերին շորք կոչսն երկրորդ դասու հասաւ, նայ կու ասէ, թէ այսպէս և Իսրայէլ լինելութեամբ չէ առաջին ազգ յաշխարհի, այլ երկրորդ ազգ է ընտրեալ յԱստուածոյ բարձր պատուով: Եվ դարձեալ անշատմունք անկեայց բաժանմունք է թանձր քառանկիւնոյն որ զեղ տուն կամ զէղ սնդուկ է, որ Լ կիրիկոն քուեայ...

(ՄՄ, ձև. N° 2595, էջ 257ա):

Այժմ Մեկնութեան լեզվի մասին առանձին.

Մեկնութեան լեզվական կառուցվածքի մեջ, երբեմն ակներև հաճախաձիւթեամբ, համատեղ ու միասնաբար կիրաւորւթուն են գտել միջին հայերենին հատուկ հետեւյալ երևույթները.

1. Կու եղանակիչը սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում. օրինակ՝ կու ասէ, կու թողու, կու վննէ, կու լինի, կու առնեմ, կու խօսէիր, կու անկանին, կու մեռանին, կուտայ, կու դնեն, կու պատմէ, կու առնէ, կու գովէ և այլն,

2. Բայի հոգնակի III դեմքի վերջավորութեան ն-ն փոխանակ մ-ի. տարնմանութեամբ մ-ն Բ-ի ազդեցութեամբ արդեն իսկ վերածվել է ն-ի. օրինակ՝ ակն շառնունք, բերենք և արգելունք, մեք ի մենէ առնենք, որ չենք, հնազանդինք, երթանք, ի տեսնուլ ենք, ենք ի խօսել, այլ ըրորդ խօսինք, մեք ասենք, ի բաց տանինք և այլն,

3. Այ-ի փոխարեն շ ժխտական մասնիկը. օրինակ՝ չկայ, չնստի, չէք յասել, չմանցին, որ չխալատէր, չեն ի բժշկել, չշնայ, չկարեն, չամաչեն, չկվայէ, չասես, չդիտեն, չերևցուցանեն, որ չկարծեն, թէ, չպիտի, չկոչցի, չորոշցի, չնդունին, չեն լսել, չեմ ուսել և չգիտեմ, չհամարեցաւ, չգիտէ, թէ չասաց ուրորդ, այդ է քեզ շատ, չեմ գիտացել, չէ հողեղեն և այլն,

4. Սահմանական եղանակի ներկայի և անկատարի դրսևորում անորոշ դերքայի ներգոյական հոլովով. օրինակ՝ չեն ի բժշկել, չեն ի հաւանել, ոչ է ի հաւանել, չէք յասել, ի ժողովել, ի կամել է. առինքն է ի ձգել, ենք ի խօսել, ի վարմանայ եմ, են ի յասել, ի տեսանել ենք, ի յաղթել ես և այլն,

5. Անցյալ դերքայի ու ձայնավորի անկմամբ վաղակատարի ներկա. օրինակ՝ յաղթել ես, շինել են, չեմ ասել, ձին է պահել, չեն լսել, չեմ գիտացել, արհամարհել եմ և այլն,

6. Հարկադրական եղանակ՝ պիտի եղանակիչով. օրինակ՝ պիտի առնել, նայ ասել պիտի, առաւել ասել պիտի և այլն,

7. Հարկադրական եղանակի ժխտականը՝ չպիտի եղանակիչով. օրինակ՝ հայնց չպիտի իմանալ, բայց չպիտի յուսահատել, չպիտի ընդ ակամայն խառնել, չպիտէր զգալիքն,

8. Առաջին ապառնիի իմաստի արտահայտութիւնը ներկա ժամանակի ձևով. օրինակ՝ որ չկարծեն թէ, որ կոչեն թէ, որ զճշմարիտն գիտենանք,

9. Խալթել, գելով, հաւկանալ, խալթել, ըմբռնել և այլ բալերի կրավորականի կազմութիւն ու ածանցով. օրինակ՝ խայթով, չգելով, հասկնով, խալով, ըմբռնով և այլն,

10. Պատճառական ուցան ածանցի հնչյունափոխութիւն՝ ացն-ի, եցն-ի. օրինակ՝ հասկացնել, վազեցնել,

11. Կայուն ու ձայնավորի սղում. օրինակ՝ իրենմ, յիրենց, ավտա, խածնէ,

12. Գալ բայի անցյալ կատարյալ ժամանակի եղակի երրորդ դեմքի

զուտ միջին հայերեն երեկ ձևը փոխանակ՝ եկն-ի կամ՝ հրամայականի՝ արևի
ձևը փոխանակ՝ արի, եկ-ի,

13. Պէտք է բառը օժանդակ բայի հետ. օրինակ՝ ի՞նչ պէտք էր պատանոյն,
որ երթայր, պիտէր որ, պիտէր, որ լինայր...

14. Թողուլ բայը՝ եղանակավորող մասնիկի իմաստով. օրինակ՝ քող
չերեցուցանեն, քող ի տաճարքն փախչի, քող գիտենան, նմանք քող լինիք,

15. Մինչև կապի փոխարեն՝ ընչվի ձևը. օրինակ՝ ի մէկէն ընչվի վեցն,

16. Ք հոգնակիակերտ մասնիկի իմաստի մթագնում. օրինակ՝ զմիտքդ,
ի միտքն, ի մեր կեանքս,

17. Փալիլ բայը՝ իմաստափոխված. օրինակ՝ երեկ փակեցաւ (եկավ կը-
պավ),

18. Եւ շաղկապի փոխարեն ու շաղկապ. օրինակ՝ ու երեքն, ու ալլ ասեն.

19. Այն դեղանվան հոգնակի սեռական հոլովը ալնոց ձևով,

20. Կրավորական սեռի ձևի վրա կազմված գոյական. օրինակ. տեսուածքն.

21. Այլ գոյականի փոխարեն մարդ գոյականը՝ ոճական նրբերանգով.
օրինակ՝ դու, ասէ, վայրենի մարդ ես,

22. Նայ, հայնց զուտ միջին հայերեն բառերը. օրինակ՝ նայ ասել պիտի,
նայ աստուածասէր գտանիմ, նայ՝ մարդասէր, հայնց չպիտի իմանալ, բայց
չեմ հայնց դիրահաւան, հայնց ի դէպ, ապայ թէ հայնց է, հայնց տեղի, չկա-
րեն հայնց և այլն,

23. Անի, նի, եր հոգնակիակերտ զուտ միջին հայերեն մասնիկները. օրի-
նակ՝ բժշկանին, աղօսնի, փարչեր, դեղերն, զբարերն, տաներն:

Ավելի ստույգ պատկերացման համար բերենք մի քանի ամբողջական պար-
բերություն.

1. Դատաւորք, որք ի քաղաքի են, չկարեն հայնց դատաստան առնել, որ
չամաչեն, կամ՝ չերկնչին, կամ՝ երես շառնեն (259ա),

2. Ներքին ականջօք լսեն, բայց առաւել ասել պիտի, թէ կամաւ չեն ի
լսել (259բ),

3. Եւ էր որ հրաժարեցոյց միայն և զպատուհասն շեղիր, զի զայն յետոյ
Մովսէս պիտէր որ դնէր (265ա),

4. Ապայ թէ հայնց է որ ասաց՝ ի երկու իրք աստ պիտոյ էր որ լինայր ի
տեառն սահմանէն, մին՝ որ ճշմարիտ լինէր քարոզութիւն, և երկրորդ՝ որ
փրկէր նինուէ: Արդ, զայն գովութիւն, որ ճշմարտութիւն պիտէր որ լինայր
աստուծոյ, որ քաղաքն կործանէր... (267բ),

5. Փիլոն կու ասէ հենգնելով զայս՝ թէ զայս չեմ գիտացել, թէ անգիտու-
թիւն և արդարութիւն միաբան են, բայց այն, որ ասաց, թէ՛ անգիտութեամբ և
արդար ձեռօք, շասաց թէ՛ ուղորդ և մաքուր (271ա),

6. Այդ չէ՞ քեզ շատ, որ անիրաւ չկոչեցի զքեզ... (271ա),

7. Սովոր են մարդիկը, որ կամենան ի մայրին գնալ և փալտ կտրել: Ասեն
թէ՛ ի կաղնուտն երթանք, թէպէտ որ ալլ և այլ փայտս հատանեն՝ փիճի և սօ-
սի և այլ զինչ կամիս, և զեղատան, որ է սընոպարենին, և զրիփաքտայքն, որ
է վայրենի ծառոց անուն... (268բ),

8. Որ չկարծեն թէ որպէս զմիջին հասակն հեշտութեամբ կեցաք, այսպէս
և զվերջինս կենանք (266բ),

9. Որ ի դէպ է, թէ իսկի չբժշկի (262բ),

10. Զէ՛ր լաւ, որ այսպիսեացն լեզուն շուտ կտրէր... (269ա):

Եվ այլ՝ բազմաթիվ նման պարբերություններ...

Կարծում ենք, ավելորդ չէր լինի բերել նաև մի շարք բառեր, որոնք օգ-
տագործվում էին հազվադեպ, կամ էլ՝ բոլորովին չէին օգտագործվում Հովհան-
նես Սարկավազի ժամանակ. օրինակ՝ բալլայ, դոգոփի, կթխայնի, շիպիքե,
սասխարայք, կասլայ, անսխութ, կոկուլաբանք, քոթանակ, ճշտար, տանկրք,
լորդու, կիկքրիս, խոնդուտի, զուիրակ, թորդ և այլն:

Վերջապես, Մեկնությունը գրված է այն ժամանակ, երբ սկսել էին գործել
«պղնձե» ժամացույցներ. «պղնձե ժամացույց լինի արարած, որ ի շուրջ գայ և

դժամն ցուցանէ»²⁷, Հանրագիտարանների վկայությամբ նման ժամացույցների մասին այդ ժամանակի (XI—XII դդ.) համար խոսք չէր կարող լինել:

Մեկնության մեջ անտիկ աշխարհի գիտության, փիլիսոփայության, մանավանդ դիցաբանության, պատմության ու մատենագրության նկատմամբ հանդես բերված խիստ հանգամանալից ու խորը իմացությունը և, հակառակը, հայ կյանքի, մշակույթի, դպրության աղոտ անդրադարձը մեզ մի պահ մտածել տվին՝ արդյո՞ք այն թարգմանություն չէ: Այս հարցադրումը անակնկալ չի թվա, եթե մոտիկից ժանոթանանք Մեկնությանը: Որոշումները, սակայն, վերահաստատեցին, որ այն թարգմանություն չէ, որովհետև հորինված է Փիլոնի երկերի հայերեն թարգմանության, նրանցից նույնաբար քաղված բնաբանների հիման վրա: Օրինակ.

1. Եւ միաբանութիւն անլորդ բնութեան (29ա).

Բն. Եւ միաբանութիւն անլորդ բնութեան. լծ. հատարեալ և անլորդ բնութիւն, որ է դորաւոր... (253բ—254ա),

2. Բագում անգամ միտք խաղախութեամբ և շարիս կրելով (23ա).

Ին. Բագում անգամ միտք. լծ. լինի մարդ, որ մտօքն շար կրէ... բագում մտօք ողջախոհ է... (254բ—255ա),

3. Ոչ միայն յայտնապէս տէրունեան (13ա).

Ին. Ոչ միայն յայտնապէս տէրունեան. լծ. տէրունեան բանն չէ յայտնապէս (253ա),

4. Իսկ յիսունն Լ-նիցն (երեսնիցն) մակ երկ մասն է (18բ).

Բն. յիսունն Լ-նիցն (երեսնիցն) մակ երկ մասն է. լծ. Լ (30). է յիսունն և ԲԺ (20) ի վերայ (253բ),

5. Յայտ է քմբոնեցելոց ամանակացն քստ իւրաքանչիւր ազգի հրամանի և քննեռութեան (92բ).

Բն. Յայտ է քմբոնեցելոց ամանակաց քստ իւրաքանչիւր ազգի հրամանի և քննեռութեան. լծ. Յայտնի է տէրունական... (258ա):

Այդպես է նաև, երբ մեկնաբանվում են առանձին բառեր. օրինակ.

1. Շապրմամբք (23ա).

Շապրմամբք — յիմարութեամբք (255ա),

2. Քուշ (35ա).

Քուշ — ցան ու ցիր ասի (255բ),

3. Արտաազահաւն և ցէծղ (26ա).

Արտաազահաւն և ցէծղ — Դաբ են, որ ի ջուրն բնակին (254բ),

4. Տոշկել (24ա).

Տոշկել — ողորկել կամ տանջել (253ա),

5. Քորակս (8բ).

Քորակս — ծածկոյթս. ասեն թէ վարտիքն է (252բ):

Այս կապակցությամբ ուղադրություն արժանի է այն, որ մեկնիչը խոսում է մի քանի բնորոշ փաստերի մասին, որոնք հայ միջավայրի, առասպելների, լեզվի խոր իմացության արդյունք են, համաձուլ են ընդհանուր շարադրանքին և օտար հեղինակի վերագրվելու կամ պատշաճեցվելու հիմք չեն տալիս:

Մեկնության հեղինակին քաջ հայտնի է, թե ինչու հայերը ծիրկաթինին «չերթող» են ասում: «Յերթող» (և ոչ «յարթադող») դասական ձևը) բարբառային-ժողովրդական ձևը մատնում է, որ հեղինակը բառը տվել է իր ժամանակի (XIII—XIV դդ.) և իր միջավայրի (կիլիկիա կամ Բարձր Հայք) արտասանությամբ: Նրան հայտնի է նաև հայ եկեղեցուն խիստ բնորոշ ծիսական ավանդություններից մեկը՝ մատաղի «աջ երին» քահանային կամ եկեղեցուն նվիրելու կարգը (262ա):

Նա, խոսելով շարականների մասին, հայտնում է, որ նրանց եղանակը երբեմն կարող էր տարբերակ ունենալ. «լծ. բանք լինէր ի շարականն, որ եղանակն Բ (2) անդամ շոջած լինէր, զինչ որ ի յառտսն կայ»²⁸:

²⁷ ՄՄ, ձև. № 2595, էջ 243ա:

²⁸ Նույն տեղում, էջ 280ա:

խոսելով Արտաշես թագավորի կողմից Կրյուսոսի բռնվելու մասին, թվում է, որ նա հիմնվում է Մովսես Խորենացու և ոչ թե նրա հույն սկզբնաղբյուրների վրա²⁹:

Վերջապես, հայերեն «աստուած» բառը կարծում ենք, հալ մեկնելը միայն կարող էր մեկնել այսպես. «...անունն աստուած ասի, որ թարգմանի՝ զմեզ «աստ ածոյ», որպէս թէ արարչութիւն զմեզ եղիր ի յաշխարհ»³⁰: Սա թարգմանություն չէր կարող լինել, որովհետև և ոչ մի լեզվով աստծուն տրված անուններին չէր կարելի «աստ ածոյ» գուգաղեպ ստուգաբանությունն անել:

Ուրեմն, Մեկնությունը թարգմանություն չէ, հեղինակն էլ հայ է:

Իսկ ո՞վ է նա: Մեր որոնումները, դժբախտաբար, մեզ որոշակի եզրակացության չբերին: Ենթադրություններ անել չենք ուզում (թեև հիմքեր կան), այլ շարունակելու ենք մեր հետազոտական ջանքերը մինչև որ գոնե գոհացուցիչ պատասխան գտնենք:

Այժմ մեր եզրակացությունն է.

«Լուծմունք Եօթնից գրոցն Փիլոնի Իմաստասիրի Երբայեցույ» մեկնաբանական-փիլիսոփայական շատ արժեքավոր միահավաք բնագիրը՝ Մեկնությունը, գրված է XIII դարի կեսերին, Կիլիկիայում կամ Բարձր Հայքի կողմերը (շատ քիչ հավանականությամբ), առ այսօր մեզ անծանոթ մի հալ բանիմաց գիտնական-վարդապետի կողմից: Ավելի ուշ, քան 1280-ական թթ. դրվել չէր կարող, քանի որ այն մասամբ ընդգրկված է Մաշտոցի անվան Մատենադարանի 1282—1283 թթ. ընդօրինակված № 437 ձեռագրում, որի գրիչներից մեկը Գլաձորի համալսարանի մեծահամբավ ուսումնական Նսայի Նեցին է:

Մեր հետագա որոնումները կվերաբերվեն Մեկնության ընդգրկված բոլոր «Եօթն գրոց» լուծմունքների հեղինակային պատկանելության և բնագրագիտական հարցերին. արդյո՞ք մեկնության մեջ ընդգրկված յոթ լուծմունքները միամբողջական միավոր են կազմում կամ այլ նման բնույթի լուծմունքների շարքի մեջ չեն մտնում: Արդյո՞ք միաժամանակյա և մեկ առանձին հեղինակի երկասիրություն են...

Այս բոլորից առավել որոշակի է դառնում նաև այն, որ Հովհաննես Սարկավագի մատենագրական ժառանգության բանասիրական, բնագրագիտական, գաղափարական-քննական հետազոտության ասպարեզում դեռ շատ անելիքներ կան:

ОТНОСИТЕЛЬНО ПРИПИСЫВАЕМОГО ОВАНЕСУ САРКАВАГУ ТРУДА «РАЗРЕШЕНИЕ СЕМИ ПИСАНИЙ ФИЛОНА»

П. П. АНТАБЯН

(Резюме)

Статья посвящена вопросу авторства ценного толковательного труда «Լուծմունք Եօթնից գրոցն Փիլոնի», приписываемого Ованесу Саркавагу Имастасеру. То, что на основе этого труда очень часто объяснялись, дополнялись и оценивались научные и философские взгляды крупного армянского мыслителя, придает особую важность решению указанного вопроса. Детальное изучение всех доводов, служивших предшествующим исследователям доказательством принадлежности данного текста Ованесу Саркавагу, показывает, что ни один из них не дает основания для такой атрибуции. Кроме того, язык текста определенно является развитым среднеармянским, который в таком виде нигде не употреблялся ранее второй пол. XIII века. Это особенно относится к языку восточной части Великой Армении, где жил и творил в XI—XII вв. Ованес Саркаваг. Во всем его творчестве нет и следа среднеармянского языка. Таким образом, исследуемый текст ему принадлежать не может.

²⁹ Հմմտ. ձեռ. № 2595, էջ 243բ: Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 125:

³⁰ ՄՄ, ձեռ. № 2595, էջ 260ա: